

փնտռեցէք վառելիք, աստուածային կրակի համար այրվող նիւթ: Տուէք մարդկանց սիրտ և փնտռեցէք նոցա մէջ սիրտ: Ահա այդ կլինի ձեր ոյժերի ամենալաւ գործադրութիւնը, կեանքի համար ամենաարդիւնաւէտ աշխատանքը:

Քարգլմ. Ա., վ.

Մ Ա Յ Ր Ա Ք Ո Ւ Ռ

Յունվարի 15-ին Վեհափառ Հայրապետի անուանակոչութեան տօնը առանձին հանդիսաւորութեամբ կատարուեց Թիֆլիզում, որտեղ և գտնուում էր խորին ծերութեան հասած տկար Հայրապետը ապաքինուելու համար:

Վանայ մայր եկեղեցում՝ Վրաստանի և Իմերէթի թեմի առաջնորդ գերապատիւ Տ. Գարեգին եպիսկոպոսը հանդիսաւոր պատարագ մատոյց, որից յետոյ մի ազգուքարսողով բացատրեց Հայաստանեայց եկեղեցու հայրապետների նշանակութիւնը հայ ժողովրդի կրօնական և ազգային յառաջագիւծութեան գործում և վերջը շեշտեց ներկայ Վեհափառ Հայրապետի կեանքն ու գործունէութիւնը: Պատարագից յետոյ Շուշուայ առաջնորդ Գրիգոր եպիսկոպոսի, Նփրեմ, Կիւրեղ, Նղիշէ, Արսէն և Կորիւն վարդապետների, նաև Թիֆլիզի ամբողջ քահանայական գասի և խուռն բազմութեան ներկայութեամբ կատարուեց Հայրապետական մաղթանք:

Մաղթանքից յետոյ հոգևորականութիւնն ու ժողովուրդը գիմեց առաջնորդարան Վեհափառ Հայրապետին շնորհաւորելու իւր անուանակոչութիւնը և երկար կեանք մաղթելու: Ծնորհաւորութեան էին եկել Ներսիսեան, Յովնանեան, Աւետեայ և այլ գալրոցներէ հոգաբարձուներն, ուսուցիչներն ու ուսանողները, օրիորդաց 1 գիմնադիօնի բարձր գասարանների աշակերտուհիները և այգեգործա-

կան դպրոցի սաները: Վեհափառ Հայրապետը, տկարութեան պատճառով չը կարողանալով բոլորին ընդունել, դուրս եկաւ դահլիճ, օրհնեց և արձակեց շնորհաւորողներին:

Այդ օրը հայաբնակ բոլոր կեդրոններից՝ թէ հոգեւորական և թէ աշխարհական անձինք, վարչութիւններ և ամբողջ քաղաքների հասարակութիւններ շտապել էին հեռագիրներով շնորհաւորել Նորին Սրբութեան անուանակոչութիւնը, բարեմաղթութիւններ անել և տարածել իրենց սրտի իղձերն ու փափագները ծերունի Հայրիկի առաջ:

Վեհափառ Հայրապետը օրհնում է և աղօթում, նաև շնորհակալութիւն է յայտնում՝ յունվարի 15-ին Իրեն շնորհաւորողներին և ամբողջ հայ ժողովրդին:

Յունվարի 29-ին Թիֆլիզից Ս. Էջմիածին վերադարձաւ Նորին սուրբ օծութիւնը իւր յետնորդներով: Վեհին բարիերթ մաղթելու համար կայարան էր եկել Թիֆլիզի քաղաքագլուխ պ. Վերմիշեանը: Ճանապարհին Վեհափառը բարեհաճեց մտնել Աղէքսանդրապօլ, գիշերեց այնտեղ և հետեւեալ օրը հասաւ Ս. Էջմիածին: Վեհափառին ընդառաջ էին եկել լուսարարապետ Ղևոնդ Եպիսկոպոսն ու Մատթէոս վարդապետը:

Մայր Աթոսս վերադարձաւ Սինօզի անդամ Տ. Մատթէոս վարդապետը, որը քննական զործով գնացած էր Ագուլիս և Հին Նախիջևան:

Բարուից Վեհափառի հրամանով կանչուեց Սինօզի անդամ Տ. Բարգէն վարդապետը:

Պետերբուրգ ուղարկուեցին Բեսսարաբիոյ թեմի առաջնորդ Գերապատիւ Տ. Ներսէս արքեպիսկոպոսը և

Մեծարող վարդապետը Նորին Վեհափառութեան ինդիլին անձամբ Ներքին Գործոց Նախարարին մատուցանելու:

Նուխույզ վիճակի փոխանորդ նշանակուեց Տ. Եղիշէ վարդապետ Ահարոնեանը:


Արձակուեցին և վերադառնում են Տ. Թովմա, Բենիկ և Խորէն վարդապետները, որոնք 1903 թուին հեռացուած էին իրենց պաշտօնավայրերից:

Մայր Աթոռիցս Թիֆլիզ մեկնեց Տ. Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեանը:

Բաքուի սարսափելի դէպքերի մասին ստացուած տեղեկութիւնների և դիմումների պատճառով ծերունազարդ Վեհափառ Հայրիկը փետրվարի 11-ին մեկնեց Թիֆլիզ՝ այնտեղից Բաքու գնալու նպատակաւ: Մեկնելու նախընթաց օրը եղած խորհրդածութեան ժամանակ որոշուեց, որ Նորին սուրբ Օծութեան ուղեկցեն Յուսիկ եպիսկոպոս, Եղիշէ, Մխիթար, Յուսիկ և Կորիւն վարդապետները, որոնցից Եղիշէ վարդապետը վանական կառավարութեան և խմբագրական գործերի պատճառաւ մնաց էջմիածին: Լրագրական տեղեկութիւններից երևում է, որ Նորին ս. Օծութիւնը մնացել է Թիֆլիզ, իսկ Բաքու ուղարկուել են Կովկասի յայտնի հերոս գեներալ ազիւտանտ իշխան Ամիրախվարիի հետ Յուսիկ եպիսկոպոսն ու Մխիթար վարդապետը:

Թիֆլիզում Բաքուի անմեղ նահատակների համար հոգեհանգիստ են կատարել հայերն ու վրացիք, հրապարակաւ պնդելով, որ բնութեամբ և վիճակով միացածներին մարդիկ և նրանց ժամանակաւոր կուրուքիւնը երբէք բաժանել չի կարող: Ներկայ եղող մահմէդական հոգե-

ւորականութիւնն ու յայտնի անձինք նոյնպէս ցաւակցութիւն են յայտնել Բաքուի եղբայրասպան դէպքերի համար և հրապարակաւ յայտնել, որ այդ դէպքերը ոչ ազգային ատելութեան, ոչ տնտեսական կացութեան և ոչ էլ ֆանատիկսութեան արդիւնք են. այլ, որ նրանք ծագել են արտաքին պատահական պատճառներից և դադանի՞ ինչ որ գթողխային ոյժից: Ամսոյս 14-ին նոյն նահատակների համար հոգեհանգիստ կատարուեց և Միաճնաէջ տաճարում ամբողջ միաբանութեան, ճեմարանի ուսուցիչների և ուսանողների, նաև վշտահար բազմաթիւ հասարակութեան ներկայութեամբ: Հանգանակութիւն է բացուած գժրազգ որբացածների համար՝ առանց կրօնի և ազգութեան խտրութեան:



ԲԱԳՈՒԻ ԱՂԷՏԸ ԵՒ ՀՈԴԵԻՈՐԱԿԱՆԻ ԶԷՆՔԸ.

Արիւնաներկ երկրի սահմանակից, առաւել անդորր և չաղաքակիրթ համարուող երկիրը անսպասելի կերպով ողորուեց հայի արիւնով, ողորուեց պարզամտութեան և տգիտութեան շնորհիւ: Այն, փետրվարի 7, 8 և 9-ին Բաքուում թափուեց հազարաւոր անմեղ մարդկանց արիւնը, կողոպտուեց և կրակի ճարակ դարձաւ նրանց աշխատանքն ու գոյքը և այնտեղ ուր աշխատանքի երգն էր լսուում և հոսում տասնեակ հազարաւոր մարդկանց մաքուր քրտինքը, անմեղ արիւն հոսեց և կրակի լեզուներ անողոք կերպով լափեցին քաղաքի զանազան մասերը: Կովկասեան մամուլի բոլոր թղթակիցներն իրենց անգոր յայտարարեցին նկարագրելու այն, ինչ որ տեղի է ունեցել այդ շէն և հարուստ քաղաքում, որը Ռուսաստանի քաղաքների մարգարիան էր և հարստութեան մի ծով: Դէպքերն համեմատում են «Բարդուղիմէոսեան գի-